

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի) 37-րդ հոդվածում լրացնել 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 40.3-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ և 189.16-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից մեկ տարվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:»

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել 189.13-րդ 189.14-րդ 189.15-րդ եւ 189.16-րդ հոդվածներով հետևյալ բովանդակությամբ`

*«Հոդված 189.13. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չներկայացնելը կամ դա չհրապարակելը*

1. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում չհրապարակելը` առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ` սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչեւ հինսնապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ ամսվա ընթացքում` առաջացնում է տուգանքի նշանակում` սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրհինսնապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով:

*Հոդված 189.14. Օրենքով սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմին չտրամադրելը*

1. Կուսակցության հրապարակած եւ լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար լիազոր մարմնի պահանջի դեպքում օրենքով սահմանված փաստաթղթերը սահմանված ժամկետում չտրամադրելը`

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

*Հոդված 189.15. Կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հատկացումները անկանխիկ չկատարելը*

1. Կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հատկացումները անկանխիկ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրիսունապատիկի չափով, նվիրատու քաղաքացիների նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև հարյուրիսունապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երկուհարյուրիսունապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրիսունապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, նվիրատու քաղաքացիների նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրիսունապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ հինգհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

*Հոդված 189.16. Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը*

1. Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրիսունապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 223.1-րդ հոդվածում «189-րդ» բառից հետո լրացնել 189.16-րդ» բառերը, իսկ «նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետը» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «արդարադատության նախարարության մարմինները» բառերից հետո լրացնել «, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը:

**Հոդված 5.** Օրենսգրքը լրացնել 223.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

*«Հոդված 223.2. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը*

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը քննում է սույն օրենսգրքի 189.13-րդ, 189.14-րդ եւ 189.15-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

**Հոդված 6.** Օրենսգրքի 302-րդ հոդվածում «188 եւ 182» բառերը փոխարինել «182, 188, 189.13, 189.14, 189.15 եւ 189.16» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Ս Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԱՐԶԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության Բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
<p>ՀՀ Կառավարություն</p> <p>Աժ պատգամավոր Կորյուն Նահապետյան</p> <p>Աժ պատգամավոր Դավիթ Հարությունյան</p>	<p>1. Նկատի ունենալով GRECO-ի կողմից ՀՀ գնահատման 3-րդ փուլի զեկույցով ներկայացված առաջարկությունները՝ անհրաժեշտ է նախագծում լրացնել դրույթներ, որոնք կվերաբերեն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ընտրական օրենսգրքի դրույթների խախտման համար վարչական պատասխանատվություն կիրառելու վաղեմության ժամկետի երկարաձգմանը:</p> <p>2. Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է հանել, քանի որ այն ըստ էության կրկնում է նախագծի 4-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները:</p> <p>3. Նկատի ունենալով, որ Ընտրական օրենսգրքում կիրառվում է «նախընտրական քարոզչություն» հասկացությունը՝ առաջարկում ենք «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում և նախագծում «ընտրարշավ» բառը փոխարինել «նախընտրական քարոզչություն» բառով:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p>	<p>1. Նախագիծը լրացվել է նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ «Սույն օրենսգրքի 40.3-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ և 189.16-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից մեկ տարվա ընթացքում»</p> <p>2. Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:</p> <p>3. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>4. Նախագծի 1-ին հոդվածում լրացվել է դրույթ՝</p>

	<p>4. Նախագծում լրացվում է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ընտրական օրենսգրքի դրույթների խախտման համար վարչական պատասխանատվություն կիրառելու վաղեմության ժամկետի երկարաձգմանը վերաբերող դրույթ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով արդեն սահմանված է, որ եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Հիշյալ դրույթով խնդիրը լուծվում է և լրացման անհրաժեշտություն չկա:</p>	<p>4.Ընդունվել է մասամբ</p>	<p>բացառություն սահմանելով օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի համար, քանի որ ստուգումների ընթացակարգով հնարավոր է բացահայտել կուսակցությունների կողմից միայն որոշ վարչական իրավապատումներ կատարելու դեպքերը:</p>
--	--	-----------------------------	---